


ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՊՈՒԼԿԱՐԻԱ	
Տարեկան	8 Ֆր.
Վեցամսեայ	4 Ֆր.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	
Տարեկան	10 Ֆր.
Վեցամսեայ	5 Ֆր.
ԱՄԵՐԻԿԱ	
Տարեկան	2. Տօլ.
Վեցամսեայ	1. Տօլ.

ԿԱՆԻՍԻԿ

ՇԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ

20 ՄԵՂ.



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԱՄԷՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

rev. Père G. Kalemkérian Michitaris
tengasce № 4
Vienne

Redaction du Journal

"Ira vou n'k"

Varna

Редакция на

Вѣстникъ

"Иравунекъ"

Варна

Գրութիւնք եւ տպարար

ՄԵՐ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Հակառակ Ազգ. Պատրիարքարանի ընդհանր ջանքերուն Պուլկարահայրենեան անկախութեան վիճակը կը շարունակուի Տէր Գրիգորի Թ. Վ. Պալագեանի Պուլկարիոյ և Ռուսական հոգևոր հովիւ անուանուելէն ի վեր երկու տարի անցաւ, բայց տակաւին չի գիտցուիր թէ նա երբ պիտի գայ իր պաշտօնին գլուխը, նախընթաց շաբթու մէջ Պատրիարքարանէն պոստահայ թերթերուն տրուած տեղեկութեան նայելով, Պալագեան վարդապետ ուզեր է Պուլկարիա գալէ առաջ իր պաշտօնը պուլկար կառավարութենէն ճանչցուած տեսնել Պատր. Տեղապահ սրբապանը անոր այս դիտողութիւնը բանաւոր նկատելով անժամապէս զինք Պոլսոյ թաղերէն մէկին քարոզչի կարգած է, բայց միևնոյն ատեն կը ջանայ Պուլկարաց Ս. Էկզարքին միջոցաւ պուլկար կառավարութեան պաշտօնական վաւերացումը ձեռք բերել:

Մեր կարծիքով տարակուսելի է որ Պատրիարքարանը միայն այդ ճամբով յաջողի, եթէ պուլկարահայրենեան ինք անտարբեր նստի այսպէս: Մեր այս տարակոյտը արդարացնող թարմ օրինակ մը կայ առջևին Ռուսական իրոյ մասին. անցեալ տարի Պուսոյ ռուսական գեսպանին միջոցաւ Պատրիարքարանի կատարած դիմումին Պազրէշի կառավարութիւնը պատասխանած էր, թէ Ռուսական հայ ժողովուրդը Առաջնորդ մը ունենալու պէտքը չէ զգացուցած մեզ: Նոյնը միթէ չէ՞ կարող ըսել պուլկար կառավարութիւնը, երբ պուլկարահայ ժողովուրդին կամ թաղականութեանց կողմէ իրեն այդ տեսակ դիմում մը չ'ըլլար:

Պուլկար կառավարութիւնը որչափ որ ալ բարեացակամ վերաբերուի ունեցած ըլլայ դէպի Հայերս, չկրնար բացառութիւն կազմել տիրող իշխանութեանց տարաւորութիւնը իր մէջ ձուլելու ընդհանուր ձգտումէն: Հայերուս Պուլկարիոյ մէջ առաջնորդական

նոր վիճակ մը կազմելու այդ ձգտումին դէմ պատեւել մը կանգնելու բնոյթը պիտի ունենայ: Այս որոշ է. զայն երկար բացատրելու պէտք չկայ կը կարծենք:

Բայց այսու հանգերէն ալ կը հաստատենք, թէ պուլկար կառավարութիւնը իբր գերազանցապէս սահմանադրական պետութիւն մը չընդգիծանար իրեն հպատակ հայ տարրին միահաղոյն և սրտագին մէկ բաղձանքին, երբ այդ յայտնուի օրինաւորութեան ճամբով:

Պուլկարահայրենի Առաջնորդ մը և կազմակերպելու վիճակ մ'ունենալու անհրաժեշտ պէտքը որչափ որ ալ զգացած ըլլանք, նախաձեռնութեան ոգիէ զգրել ըլլալուս պատճառաւ թոյլ ու անտարբեր կը մնանք այդ ազաւակող անհրաժեշտութեան առջև և կը սպասենք որ Պատրիարքարանը բան մ'ընէ, կամ ազդեցիկ թելադրութիւն մը զմեզ դարձի մղէ:

Պուլկար պետութենէն պաշտօնապէս ճանչցուած Առաջնորդական վիճակ մը հաստատելու համար մենք կը կարծենք թէ, ինչպէս վերը բացատրեցինք, միայն Պատրիարքարանի ջանքերը կըրնան աշխարհութեան մատնուիլ, եթէ ասդէն պուլկարահայրենեան իր կարգին դիմումներ չընէ կառավարութեան առջև, բայց որովհետեւ պուլկարահայրեն 8-10 քաղաքներու մէջ ցրուած ըլլալով, միահաղոյն քայլ մը առնելու յարմարութենէն և նախաձեռնարկ եղող մէկ քաղաքին հետեւելու խոնարհամտութենէն զուրկ ենք, կը մնայ միայն մէկ միջոց մը. այն է որ Ազգ. Պատրիարքարանը ինք թելադրէ ու հրահանգէ Պուլկարիոյ տասը թաղ, Խորհուրդները որ հարկ եղած դիմումը կատարեն կառավարութեան, առաջնորդական վիճակի մը կազմութիւնը վաւերացնելու և Սօֆիա հաստատութիւնը Հայոց Առաջնորդարանին ծախսոց նըպաստելու համար, ինչպէս կը նըպաստէ իսլամներու միջոցին և Հրէից խալիսապետի ծախսերուն:

Պատր. Տեղապահ սրբապանին և Ազգ. կեցք. վարչութեան ուշա-

դուրութիւնը կը հրաւիրենք այս կէտին, և կը յուսանք որ Պուլկարահայրենի Առաջն. փոխանորդ անուանեալ Տէր Օհան Մանգակունի Ա. քահանան ալ այս մասին այլևս վերջ կուտայ իր անշարժութեան:

Յ. Պուրպէր

ՊԱՌԱԿՏՈՒՄ

ՕՍՄ. ՎԱՐԻՉ ՏԱՐԵՐՈՒՆ ՄԷՉ

Հակառակ ժամանակէ մը ի վեր հերքում հերքումի յաջորդելուն, վերջին եօթնեակին մէջ անհրաժեշտ կերպով յայտնուեցաւ թէ լուրջ պառակտում մը կը տիրէ օսմ. Միութիւն և Յառաջդիմութիւն կուսակցութեան մէջ: Երկրին վարիչ ուժը այդ կուսակցութեան ձեռքը ըլլալով, տիրող պառակտումը սկսած ժողովուրդին մէջ սա երկրիւր ազդել՝ որ միջոցէ անգամ մըն ալ Մարտ 31-ի սարսափը կրնի:

Պառակտումի բուն պատճառները որչափ որ ալ չեն յայտնուիր, սակայն առ երեւոյթս պատճառ ցոյց կը տրուի Մ. և Յ. կուսակցութեան ծրագրին մէջ սակեւորուն յաւելումը զոր կը պահանջեն նոյն կուսակցութեան մաս մը երեսփոխանները, որոնք, կելեայ թէ, գայթակղած են կարգ մը վարիչներուն շահագործումներէն: Ահա պահանջուած կէտերը:

Ա. Դահլիճին անդամներն այլ ևս չառնուին Երեսփ. ժողովին անդամներէն: Բ. Երեսփոխաններուն արգիլուի ընդունիլ պետական պաշտօններ՝ ինչպէս է կուսակց. կառավարիչ, դատաւոր և այլն: Գ. Երեսփոխաններն ուրիշ հաշուոյն մենաշնորհ չ'ընդունեն կամ անոր հետամուտ չ'ըլլան. նաև որ և է Ընկերութեան վարչական Խորհուրդին չանդամակցին: Դ. Լաւազոյն միջոցը գտնել խալիֆայութեան ու կայսրութեան իրաւունքները հաշտեցնելու ազգ. վեհապետութեան սկզբունքին հետ: Զանալ օրէնքներու պատրաստութեան մէջ հաշտեցնելու երկրին սովորութիւններն արդի-

յառաջդիմութեան պահանջումներուն հետ: Զ. Օսմանեան կայսրութեան պատմական աւանդութեանց համաձայն քաղաքականութեան մը հետեւիլ: Է. Օրէնքով մը սահմանել նախարարներուն իրաւասութիւններն և պատասխանատուութիւնը: Ը. Պաշտօնեալներուն անուանումը ու պաշտօնանկութիւնը մասնաւոր կանոնադրով մը կատարել: Թ. Միջոցներ ձեռք առնել օսմ. տարրերու միջև միութիւնը ամրապնդելու ժ. Երկու երրորդի մեծամասնութիւն եթէ քոյանայ ալ, ընդգիծող զիտողութիւնները լսել ժ. Ա. Այս բանէ առաջ զարգացը նել երկրագործութիւնն և քաղաքները երկրին մէջ առաջ գալիք ձեռարուեստները, Ժ. Արգիլել գաղտնի չ'օրէնքներու արարքները:

Ինչպէս կը տեսնուի առաջին երեք կետերէն, ժէօն թիւրք օսմիթէին կամ կուսակցութեան դժգոհ հասուածը կուղէ պատուար կանգնել նոյն կուսակցութեան կարգ մը պետերուն փառասիրական և շահագործական ձգտումներուն առջև և յարգել տալ փոքրամասնութեան ալ ձայնը որ մինչև այսօր խեղդուած կը մնար:

Նոյն կուսակցութեան մեծամասնութեան և ընդգիծողի հատւածին վերջին հրատարակութիւններէն կը հասկցուէր թէ վտանգ մը, պոռթկում մը մօտալուտ է. նոյն իսկ Բուխարէի մէջ թուրք թերթեր գտնուեցան որոնք չը քաջութեան անգամ մըն ալ Պոլիս արշաւելու սպառնալիքը ցոյց տալէ, վասն զի, ինչպէս կը հաստատուի, Բ. և Գ. զօրաբանահներու ենթապաները ընդգիծող դիր հատուածին համամիտ են: Բարեբաղդաբար նոյն կուսակցութեան մեծամասնութեան վարիչները՝ որոնց ձեռքին մէջն է այսօր կառավարութեան ալ զեկր, խոհմութիւն համարեցին համաձայնութիւնը կայացաւ շտաբի օր, պահանջուած կէտերուն մեծագոյն մասը ընդունելով կուսակցու-

Թեան ծրագրին մէջ: Այդ ըն-
դունումը կէտերը պիտի ենթար-
կուին սակայն Օսմ. Գոմիթէին
յառաջիկայ համաժողովին քննու-
թեան: Հաւանականագէտ այս հա-
մաժողովին նիստերը խիստ փո-
թորկայից պիտի ըլլան և քիչ
մըն ալ չբեմին գալկասիի և
ընտրութեան պիտի առնեն: որովհետեւ
գլխաւոր դժգոհութիւնը, ըստ
երեւոյթի, այդ կէտին մէջն է,
թէ և չի իրար ձգտելու որ ազ-
գայնամուտի իրենց դե-
րերը ունեն հոն:

ՏԻՊԱՐ ՎԱՐԺԱՊԵՏԸ

Յայտնի ըլլալով տարիներէ ի վեր
Պարսկաստանի մէջ տիրող անբարե-
կան վիճակը, այդ տարաբաղդ երկրի
դժբաղդագոյն հայ բնակչութեան կա-
ցութիւնը ալ աւելի դառնացած է հայ
եկեղեցիներու ի գործ դրած անվերջ
ծայրայեղութիւններով: Հետեւեալ քրդ-
բաղկտիւնը բաւական որոշ գաղա-
փար մը կուտայ այդ հայ եկեղեցիներ-
ու վարմունքի մասին:

Սանգիւրաբան 1 փետր.

Այլատեսան սրբազանից և գիւղ. կըր-
թական խորհրդից մեր գիւղի համար
աւագ ուսուցիչ ուղարկած Գեղամ
(Արտաշէս) Յարութիւնները իր խմբով
ան ուղղի մէջ է ձգել բոլորիս և որ-
պէս մի կատարել գաղան, հանդիպողին
պատահաբար է սպառնում. վերջերս
յայտարարել է թէ «տարածական ծա-
րաւել է արևան, մինչև մի քանիսն
չսպանէ. չի յազնալ» արդէն որոշել
է արհեստագործ իր զոհերը:

Եւ երևակայեցէք խղճներս ու ճըն-
չւածներս գրութիւնը այս մարդա-
կերպ չընչի ձեռքում: Ոչ որ չի հա-
մարձակում ձայն ու ծպուտ հանել,
բողոքողին սպառնում են մահով, նայն-
իսկ որդին հոր: Մնացել ենք բոլորու-
միս անհար ու անօգնական: Ով որ
իրենց առաջարկած թղթերին չի ստու-
րագրում և իրենց հրամաններին չի
ենթարկուած, նրա դէմ ուղղւած է «ա-
ւագ ուսուցիչ» տանադատութեան
ատրճանակը: Մինչև նրա երեք ան-
գամ փորձ է արել սպանութեան բարե-
բախտաբար անաշու:

Սա ուսուցիչ չէ ու չի էլ կարող լի-

նել: Սա աւելի չուտ մի բռնակալ խան
է, որ իւր խմբակի հետ միասին սար-
սափ է տարածում ամեն կողմ. — Ախր
որ ուսուցիչը սրով ու ատրճանակով
զինւած դաս կը պարագլէ, այն էլ մի-
այն քէֆն ուղած ժամերին, իսկ միա-
ցած ժամանակը, դպրոցը երեսի վրայ
ձգած, չարախնդրով կը թափառէ գիւ-
ղից գիւղ, խաղաղ անկուններ վրդո-
վելու:

Եթէ դաշնակցութեան պրօպագան-
դիստ է, ինչու պիտի դպրոցից ուսուցիչ
ստանայ, ու մեր դպրոցը փակուած
մնար:

Մեր գիւղի դպրոցը, (ամենահինը
Փերիա գաւառում) որ նախկին տարի-
ներում 400ից աւելի աշակերտ աշա-
կերտուհիներ էր ունենում, այս տարի
պ. «աւագ ուսուցիչ» շնորհիւ ունի
միայն 30-ի չափ երեխաներ: Մինչ օրս
ուղարկուած ուսուցիչ վարժուհիները
և թէ մի մեծ գործ չեն կատարել դոնէ
երեխաներին կանոնաւոր կերպով կա-
ռավարել և դրադիտութեան և այլ
նախնական ուսման քննիչ հետ ծանո-
թացրել են, որ չափով որ իրենց կա-
րողութիւնը շնորհ է իսկ այս պարտն-
դաբոցը փակում է և խօսքանից վը-
ռնուած վարժուհուն ետեւիցը ձգած
թափառում է դէս ու դէն:

Սա իր բռնած ընթացքով աւելի
յարմար է քաղաքային ուստիկան դառ-
նալու, քան գիւղական ուսուցիչ և
այն էլ աւագ ուսուցիչ կոչուելու:
Ձգելու ենք, կրթական խորհուրդը ին-
չու մեր գրաւոր բողոքներին բաւա-
կանութիւն չի տալիս, ինչու է թող-
նում գործը այնպիսի հասնի, որ մենք
ինքներս անենք մեր դատաստանը:
(Ձախ) Սանգիւրաբանի

ՏԵՂԱԿԱՆ

ԱՂԲԱՍԸ ԵՄԼԱՌՈՐԾՈՒՆԵՐ

Պ. Ամիրխանեանցի ղեկավարութե-
ամբ հայ պատանիներէ կազմուած տեղ-
ւոյս ԲԵՆԱՐՆԵԱՆ ԵՄԼԱՌՈՐԾՈՒՆԵՐ
կան երկրորդ մը տուած ապրիլ 3ին:
Իր հրապարակ հանած ծանուցումին
ճակատը կերակար առ սողը «Մաղկա-
զաղի առիւթ բարեկրօնական նպա-
տակալ» իսկ տոմարները վաճառե-
լու համար հայ վաճառատններ ու
տուներ պարտադ խմբակը «Ձախի առ-

թիւ աղբատիկ դպրոցականներու հա-
գուտ շինելու նպատակաւ կը տրուի
այս երկրորդը» ըսած էր հետաքրքր-
ներու, որոնք ըստ այդ բացատրութե-
ան զուտ բարեգործական ձեռնարկ մը
նկատելով տուած էին իրենց նպաստ-
ները: Դաշնական տեսնելով թէ Օր.
Ամիրխանեանցի քով կը գտնուի ծա-
նոթ հայ տիկին մը, որուն անշահա-
խնդրութեան կրնային վստահիլ:

Բայց երկրորդի միջոցին շահագոր-
ծումը կատարած կարթննայ ժողովուր
դի մէկ մասին մէջ. և կը տարածու-
նուի որ հասոյթը անհասկնաբար յատ-
կացուած է և ոչ թէ աղբատիկ աղա-
յոց:

Այս տարածախոսքին ստու գելու
համար մեր Խմբագրի պարտականու-
թեան մըն է մենք հարց ու փորձ
ըրնք և ստացանք հետեւեալ տեղեկու-
թիւնները:

Յիշեալ Գնար նուագախումբը ա-
ռանց թաղ. Խորհրդոյ հաւանութեան
ու հակակշիռ սարքած է այդ երե-
կայի և իր հաշիւը և իր հասոյթին
սանդիւմ մը ցոյց չէ տուած ոչ թաղա-
կանութեան, ոչ հոգաբարձութեան,
ցոյց Աղբատիկան ընկերութեան և ոչ
Դպրոցապետացին:

Բայց խումբը երեւոյթը աստիճան մը
փրկելու համար՝ 3-4 դպրոցական տը-
ղայոց մէջմէկ զոյգ կոչիլ տուած է
միայն: Այդ կոչիլներուն արժէքը 25-
30 փրանգէն անդին չանցնիր: Մինչ-
դեռ վաճառուած տոմարներէն կը
հասկցուի թէ 3-400 փր. հասոյթ գո-
յացած է: Ուրեմն շահագործումը ակ-
նեւն է:

Նահատակներու անունը չհաղար-
ծել կոտորած է փախչող գալթականե-
րը շահագործել, հայ որբերու և որ-
բանոցի անունը շահագործել. իսկ «Տի-
րոջը Խոսքը» յաւատ շահագործել. և
այդ ամէնէն գաղ լաճել հրապարակ
նետել շահագործելու համար նաեւ աղ-
քատիկ ու մերկ ուսանողներու դողա-
հար մարմինը: Եւ այս ամէն շահա-
գործումները միմիայն յարկ յարկի վը-
րայ սեփական շքեղ ապարանքներ
կառուցանելու համար:


Բայց մենք ձգեցինք շահագործումը իր
վաղաժամեօթ դերին մէջ իր լաճերուն
հետ, և դառնանք մեր պաշտօնական
մարմիններուն որոնք անտարբեր հան-
գիստահանք մնացած են յայտնորէն
գործուած ապրիլներէն: Վաճառայի
հայտնութիւնը ունի իր հոգաբարձու-
թիւնը, Աղբատիկան և Դպրոցապա-

րաքը պաշտօնապէս հաստատուած և
ստանց գրութիւնը. Խորհուրդը մը,
որուն պարտականութիւնն է նախա-
հարկ ազգային շրջանակի մէջ գոր-
ծուած օրինադրանքները. պաշտ-
պանի որբին ու աղքատին իրաւունք-
ները և չի ստանդարտի որ այս ու այն
մարդիկ քմահաճօրէն շահագործեն ա-
նոնց անունը: Բայց ցաւալին այն է
որ թաղ. Խորհուրդը անտարբեր զըտ-
նուած է նայն իսկ եկեղեցւոյ բակին
մէջ, Մաղկազարդի կրթական, սեզան
զննելով յանուն աղքատ աղայոց տոմ-
արակ ծախուելուն և նպաստ հատա-
նելուն հաճեալ Միջոցներ ինք պար-
տաւոր էր այդ պատանիները և Ու-
միրխանեանցը կանչել ու զօնթոյրի
ենթարկել անոնց ապագայ տուած
տոմարները և եկեղեցւոյ բակը զըր-
ուած պնակին հասոյթը:

Իսկ եթէ Գնար խումբի պարտնի-
ները չի համակիրդէին Ազգ. Պաշտօ-
նական մարմնոյ այս օրինաւոր պա-
նանին, անոնք իրենց այդ վարմուն-
քով աղագուցած կըլլային թէ իրենց
նպատակը շահագործումէ, և այս պա-
րագային թաղ. Խորհուրդին միջոցներ
չէին պակսեր անոնց գեղեցիկ դաս մը
տալու հաւար. օրինակ, Թագականու-
միւնը կրնար անհրաժեշտ մողովուր-
դին ծանուցանել թէ իրեն վստահու-
թիւն չի ներշնչեր նոյն խումբի այդ
ձեռնարկը: Ան ասան ժողովուրդը չէր
մասնակցեր այդ տեսակ պաշտօնադրո-
գործի մը:

Մինչդեռ թաղ. Խորհուրդը իր այս
պաշտականութիւնը չկատարելէ զատ
թոյլատրած է որ իր պաշտօնականներէ
երկուքը (երկու վարժուհի) թէ գործ-
նախնայեալ մասնակցին և թէ տուէն
տուս երթան տիկնաներ համոզելու որ
տոմարակ ծախելու ելլեն՝ կրնապաշտօ-
նակ ան դոյն տալով իրենց դիմումին:
Իսկ ինչ կերպով խաբուած են թէ՛
տոմարակ ծախելու օգնող մէկ քանի ծա-
նոթ անձնաւորութիւններ թէ՛ մողով-
ութիւնը:

Այլ քան, որ շահագործել անխղ-
ճութիւն է, ամօթ է. այդպիսիները
սանձաւորակ ձգելը ապիկարութիւն է.
Իսկ ժողովուրդին առանց լաւ քննե-
լու և առանց պաշտօնապէս ճանցը-
ւած մարմնոյ մը ստորագրութիւնը
տեսնելու խաբուելը ապուշութիւն է:



ՈՒՆԵԱՄ ՍԹԷՏ

ԻՆՉՊԵՏԱԿ ԿԸ ՀԱՂՈՐԴԱԿՑԻՆԲ

ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԱՇԽԱՐՀԻ ՇԵՏ

Գ.

(Շար. նախորդ թիւէն)

Այդպիսի լուսանկարներ եւ ոչ թէ միայն մէկ ան-
գամ, այլ շատ անգամներ հանած եմ: Հոս մէջ պի-
տի բերեմ ձեզի դէպք մը միայն: Լուսանկարիչ մը
որ արդէն ծերուկ արհեստաւոր մ'էր առանց ու է
զարգացումի՝ մեհլուի յատկութիւն ունէր, ինչ որ
հնարաւորութիւն կրնայէր իրեն անտեսանելի լու-
սանկարել: Այդ անտուր հանգամանքը երբեմն ար-
գելը կըլլար նոյն իսկ լրջօրէն իւր արհեստովը ըզ-
բաղուելուն: Նա կը վայելէր պայծառասեւ ըլլալու
յատկութիւն մը վերջին պօէրական պատերազմի ա-
տեն, անոր քով դասի և խնդրեցի իրմէ հոգեբանա-
գիտական փորձեր կատարել, հետաքրքիր ըլլալով
Քիտանալ թէ ինչ պիտի ելն անկէ:

Հազիւ թէ ծերուկի դիմացը աթոռի մը վրայ նըս-
տեցայ, նա ինծի ըստ.

— Այս օրերու մէջ ինծի տարօրինակ բան մը պա-
տահեցաւ: Իմ աշխատանքի մէջ ինծի երեւաց ծերուկ
պօէր մը: Նա հրաշանով էր և անոր դաժան նախ-
ուածքը ինծի վախ աղեց: «Դու բանդ, ըսի իրեն,
ես հրաշաները չեմ սիրեր»: Նա գնաց և անհ հի-
մայ դարձեալ հոս է: Նա ալիւս գէնք չ'ունի անոր
նայուածքին մէջ չ'կայ ու է խստութիւն: Թող
տամ իրեն հոս մնալու:

— Անշուշտ, պատարիւնների ևս: Բայց ինչ կը
կարծէք, կրնա՞ք անոր լուսանկարը հանել:

— Ձգեալու, ըսաւ ծերուկը, փորձենք:

Ես նստայ հակառակ կողմը և լուսանկարիչը հանեց
պատկերը: Ես բան մ'ալ չ'կրցի տեսնել, բայց ապա
կին հանելէ առաջ հարցուցի իրեն:

— Անգեալ անգամ դուք խօսեցաք իրեն հետ կըր-
նա՞ք հիմալ ալ խօսակցութեան մտնել:

— Այո՛, անկիւս տակաւին ձեր ետեւը կեցած է:

— Ձեզի պիտի պատասխանե՞մ թէ իրեն հարցում
տաք:

— Ձգեալու, փորձենք:

— Հարցուցէք, ինչ է անունը

Լուսանկարիչը այնպիսի ձե մը առաւ որ կարծես
թէ մտովի տուած հարցումը և կսպասէր պատաս-
խանի: Ինչ յետոյ ըստ.

— Նա կըսէ թէ անունը Բլէթ Պօթա է:

— Բլէթ Պօթա՞ մի, կասկածելով յարցի ես: Աս
գիտեմ Ձերիւ, Լիւտովիկ, Խրիսթիան և Աստուած
գետէ դեռ որքան Պօթաներ, ասոյց երբէք չ'եմ ի-
մացած Բլէթ Պօթա կենալը:

— Կըսէ թէ անունը աղբալէս է, բարձրաձայն ա-
ռարկեց ծերուկը:

Երբ նա լուսանկարի ապակին պատրաստեց, ես
իմ ետեւ տեսայ երկայն մաղերով մարդու դէմք մը
որ լաւ կը պատկերացնէր պարզ դիպուածի պարտա-
զան: Հարցուցի լուսանկարչին իմանալու համար
թէ՛ որդին իւր անունը չ'պիտի յայտնէ: Անգղից
մէջ, որքան որ գիտեմ, չ'է իմացուած որ և է ծա-
մանակ Բլէթ Պօթա մը եղած ըլլալը:

Անոնք որ չ'են հաւատար անգղերեկմանեան
կեանքի գոյութեանը, հարկ է որ փորձեն յիշօրէն ու
րոշելու թէ՛ այդ բանին մէջ համագործակցութեան
տեսակ ապացոյց է ուս պիտի կը տեսնեն: Նախորդ
համարներու մէջ ես այնպիսի խորհուրդներ պար-
գելի, որոնք ինչ կը թուի թէ՛ անյայտնի կը հաս-

Հ. ԲԱՐԵԳ. ՄԻՈՒԹԻՒՆԸ

Հ. Բ. Ը. Միութիւնը վառայ մէջ վարժապետանոց մը բանալու որոշումը տուած է այդ նոր հաստատութեան ղեկավարութիւնը յանձնած է Միացեալ Ընկերութեան: Այս վերջինն ալ համաձայնութիւն գոյացուցած է վառայ Կեդր. վարժարանի հոգաբարձութեան և վարչ. Ժողովոց հետ: Բայց տեղւոյն դաշնակցականները հակառակած են այս կարգադրութեան և լուսանքներ կը տեղացնեն թէ՛ Բարեգործականի և թէ՛ Միացեալ Ընկերութեան հասցէին, սակայն տեղւոյն Ժողովրդեան մեծամասնութիւնը սկսած է քաջալերող հանդիսանալ Միացեալ աղջաչէն ջանքերուն:

— Բարեգ. Միութիւնը Շարտէրէի մէջ ալ վարժարան մը բանալու որոշում տուած է: Ասով Միութիւնը 21 նախակրթարան, մէկ վարժապետանոց և մէկ որբանոց-վարժարան պահած կ'ըլլայ գաւառներու մէջ:

Նոյն Միութիւնը կը մշակէ ծրագիր մը զիւղատնտեսական վարժարան մը բանալու համար Մշոյ մէջ:

Բարեգործ. Միութեան Ընդհ. Ժողովին ներկայ եղող մը կը գրէ. թէ նախագահն Պօղոս Փաշա Նուպար ի մէջ այլոց հետեւալ յայտարարութիւնը բնական է կտակներու մասին հարցումի մը պատասխանելով.

«Այսօր Հ. Բ. Միութիւնը օրինական գոյութիւն ունեցող հաստատութիւն մըն է, քանի որ պաշտօնապէս ճանչցուած է օսմանստ և եգիպտական կառավարութեանց կողմէ. հետեւալար Միութիւնը կրնայ ընդունիլ կտակներ որոնք կէտ առ կէտ պիտի գործադրուին կտակազրին բացարձակ արամագրութեան համեմատ»

Ընդհանուր Ժողովոյ ընթացքին նախագահին այդ հանդիսաւոր յայտարարութիւնը մեր հարուստ աղջալիներուն նորագոյն վստահութիւն մը կը ներշնչէ կտակներ ընելու Միութեան:

— Հ. Բարեգ. Միութեան Սօփիայի մասնաճիւղին ատենապետ Պատ. Յաւկոր Շահվէլեան քաղաքս ժամանած է և պիտի մնայ 2-3 շաբաթս Պատուելին մտադիր է ջանքեր թափել վառայի մէջ ալ մասնաճիւղ մը կազմելու, Արդէն քաղաքին թէ՛ վաճառակոչն դասէն և թէ՛ երիտասարդութենէն բաւական թուով անձնաւորու-

թիւներ կան այդ փափաքը ունեցող: Ուստի կը յուսանք թէ Պատ. Շահվէլեանի թափելիք ջանքերը յաջողութեամբ պսակուին: Ինչպէս կը պատմէ ինք, Սօփիայի Մասնաճիւղը 23-ի չափ անդամներ ունի և կանոնադրապէս կը շարունակէ իր ստանձնած պարտականութիւնը. իր տարեկան տեղեկագիրը գոհունակութիւն պատճառած է Կեդր. վարչութեան:

— Յաւկորը տեղեկանքով թէ Ռուս-չուք Մասնաճիւղը չափ թուով կ'ընթանայ: Իսկ Ֆիլիպէինի մասին ոչինչ չենք իմանար: Կը ցաւինք որ Գահրէի և Պոլսոյ Կեդրոնները չի հաճեցան ցարդ ուշադրութիւն դարձնել Պուլկարիոյ և Ռումանիոյ կողմերը ուր պատրաստականութիւն չի պակսիր եթէ առաջնորդող մը գտնուի:

ԱՂԳԱՅԻՆ

— Դաշնակցութեան գործին առթիւ Ռուսիոյ Նովոչէրգասգի մէջ բանտարկուած Հոյերու ազգականները դիմեցին Ռուս դատական նախարարին՝ դրամական երաշխաւորութիւն տալով մինչև դատավարութեան օրը ազատելու համար զանոնք: (որովհետեւ թէ՛ բանտը չ'փախդանք յեցուն է եղեր և թէ թիֆոյի հիւանդութիւնը սկսած է ճարակիլ ու սպառնալ բանտարկեալներու կեանքին:

— Մշակ Օրաթերթի վերջին թիւերէն մին (թիւ 66)՝ գրաւուեր է ռուս իշխանութեան կողմէ:

— Թուրքիոյ Եւփոսական նախարարութիւնը նոր շրջաբերակաւ նով մը պատուիրեց գաւառի եւ մտական պաշտօնեաներուն տուրք չգանձել այն կալուածներէն որոնց հասոյթը կրթական յարկերու պահպանութեան յատկացուած է:

— Ս. Փրկիչ Ազգ. Հիւանդանոցին յատկացուած միսի պետական

նպաստը կրկին կտրուած է: Տեղապահ սրբազանը կառավարութեան դիմեց և պարզելով հիւանդանոցի օրերուն և հիւանդանոցին արգահատելի վիճակը, խնդրեց որ միսի նպաստը շարունակուի: Մեր այդ հիւանդանոցի մասին Համիտը շատ աւելի վեհանձն գտնուած էր քան սա ժէօն թիւը կառավարութիւնը որ տարին քանի մը անգամ պարէնէ կը զրկէ հայ տառապեալները:

— Ամերիկայի նորընտիր առաջնորդ Տէր Մուշեղ Եպիսկոպոս հրաժարեր է այդ պաշտօնէն: Այլքէնին լոյս Արմէնիայի և Աղառաւմարտի որոնց փուշ եղած էր ընտրուիլ և նոյնիսկ Ամերիկայ երթալը: Բայց Տ. Մուշեղ Եպիսկոպոս մտադիր չէր և իր մօտ ատենէ Ամերիկայէն մեկնելու, ուր հայ գաղթականութիւնները անհունապէս կօգտուին աւտորիտար իշխանութեանը, և քաղաքէ քաղաք կը հրաւիրեն զանի: Հոն դաշնակցականներու մոլեռանդ խմբակ մը կայ միայն որ կը փորձէ հալածել ընդհանրաց ալ ընթացող աւելի կը փառաւորուի նորին Սրբազնութիւնը և յառաջ կը տանի Հ. Բարեգ. Ընդհ. Միութեան բոքրականդի գործը:

— Չիքակոյի մէջ Հ. Սահմ. Ռամկավար կուսակցութեան ակումբին կողմէ սարքուած վերջին հրապարակային ժողովը անօրինակ մեծ բազմութեամբ տեղի ունեցած է: Տէր Մուշեղ Եպիսկոպոս ևս հրաւիրուած ըլլալով, երկու ժամու չ'փ իր պերճախօսութեամբ դիմեց և ուկնդիրներուն բազմութիւնը, Բանաստեղծ Ենիա Բաօֆէսէօր Շէքերճեան և Տ. Վ. Գրիգորեան: Այս վերջինը քննադատած է Դաշնակցականներու գործելակերպը, կանխապատ-

րաստեալ դաշնակցականներ իսկապարել ուղած են ժողովը, բայց ժողովուրդը չի հանդուրժելով անոնց արարքին ու հայհոյանքներուն, ուղած է խռովարարները դուրս հանել: անոնք ընդհիմացած են, ուստի և ծեծուած են ու մէկին գլուխը ճեղքուած է:

— Սերաստիայէն կը հեռագրեն, թէ Ապրիլ 9ին Ջարա գաւառակին կէլանիլ ագարակին մարդերէն Ուպուշօլլը Հազգը, Պէտրիսանօլլու Համիտի Տուրսուն, արտի մը համար ծագած վէճի մը առթիւ բրիչով սպաննեցին Չիլ Յովհաննէսեան Յովհաննէսն ու եղբայրը Սալիկը: Մարդասպաններուն ամենքն ալ ձերբակալուելով յանձնուեցան դատական իշխանութեանց:

— Մեակ Ապրիլ 9ին Դաւիթէժէն ըստացած է հետեւեալ հեռագիրը:

«Ապրիլ 2ին «Ջանգի» խմբագիրներինց Ալէքսանդր Տէր-Լարդանեան մահափորձը ենթարկվեց «Դաշնակցութեան» բռնութիւնների դէմ իր մղած պայքարի առիթով:

Խմբագր. «Ջանգի»

— Ս. Ջառկի ատթիւ պատշաճ ընդունելութիւն կատարուեցաւ Պատրիարքարանի մէջ: Ընտրուողական այցելութիւններ տուին Տեղապահ Սրբազանին զեպաններ, պետական անձնաւորութիւններ, Պուլկարոց Ս. Էկզարքը և այլն:

— Յոյն Պատրիարքարանի Սինօղը հապճեպ որոշումով մը մերժած է հայ կղեր չգտնուած տեղերը հայոց հաղորդութիւն տալու առաջարկը, բայց մեր Պատր. փոխանորդին տուած բացատրութեանց վրայ, ծէր Եօակիմ Պատրիարքը յայտնած է թէ իրենք հայ եկեղեցին ուղղափառ կը ճանչնան և հարկ եղած պիտի ընէ հաղորդութեան մասին:

— Ես առթիւ Յունաց Պատրիարքը փունջ մը զրկած է մեր Տեղապահ Սրբազանին և խոստացած է ուրբաթ օր այցելել մեր Պատրիարքարանը: և հաղորդել Սինօղին նոր որոշումը:

— Ջառկի ատթիւ Պատր. Տեղապահին Պուլկարաց Էկզարքին տուած փոխադարձ այցելութեան առթիւ, Էկզարքը խոստացաւ Պուլկարահայոց առաջնորդական և դպրոցական խնդիրներն ի նպաստ Աղջին լուծելու համար ձեռքէն եկած աշխատութիւնը նուիրել:

ատենին անհատի գոյութեան շարունակութիւնը իւր մահընէն վերջն ալ: Այդ բոլոր փաստերը ես կը պարտիմ իմ անձնական փորձերուս: Այս առթիւ ընթերցողին վստահութիւնը կախում ունի իմ ուղղադատութեանս վրայ ունեցած վստահութենէն: Բոլորն ալ կատարուած են ճիշտ այնպէս, ինչպէս, ես հոս նկարագրած եմ: Ենթադրենք այժմ թէ այդ միւսնոյն բանը ձեզի պատահած է, արդեօք պիտի կրնայիք այն ատեն ալ մօրեկ ընդունելու թէ՛ ներկայացուած փաստերը գէթ և priori լիակատար փութաշանութեամբ մեծ հետաքրքրութեամբ հիմնական պատճառներ ունին գիտականապէս ուսումնասիրուելու:

Աւելի ինչ մեծ ակներև ապացոյցներ կարելի է պահանջել մարդ համոզում գոյացնելու համար:

Ես ոչ ոքի կաղաչեմ ուրիշի մը հաստատանքներուն այսքան շուտով հաւատք ընծայելու: Արդարեւ ամեն ոք մեհիւմ չ'է: Ես իմ անփական մէտքումս ըլլալու բաղդաւորութիւնը կը վայելեմ և այս պարագան գէթ ուն է հաւանական ատարկութիւն չ'վերցնել, բայց պէտք է նկատի ունենալ թէ ոչ նուազ անբարեխիղճ մէտքներ կան: Եթէ աւելի լաւ հետապնդէք, գուցէ ձեր ծանօթներու միջև ալ պիտի գտնուէք այդպիսիներ:

Խօսք մը ևս: Վերջին տասնեակինգ տարւոյ ժամանակամիջոցին մէջ, չնորհիւ առաջին ձեռքով ստացուած շատ մը վկայագրերու ես համոզուեցայ թէ անհատը արդարեւ մահուանէ վերջն ալ կը շարունակէ իր գոյութիւնը և թէ կրնանք մեռած մարդոց հետ հաղորդակցել: Սակայն միշտ կըսէի իւրովի,

նախամիջոցին մէջ, չնորհիւ առաջին ձեռքով ստացուած շատ մը վկայագրերու ես համոզուեցայ թէ անհատը արդարեւ մահուանէ վերջն ալ կը շարունակէ իր գոյութիւնը և թէ կրնանք մեռած մարդոց հետ հաղորդակցել: Սակայն միշտ կըսէի իւրովի,

— Պիտի սպասեմ, մինչև որ իմ ընտանիքէն մէկը երթայ հանդերձեալ աշխարհ, որպէսզի կրկին փորձեմ և այն ատեն միայն հրապարակաւ յայտարարեմ այս խնդրոյ առթիւ իմ ունեցած համոզումներս:

Եւ ահա, տարի մը առաջ մեռաւ իմ անդրանիկ զաւակս ՅՅ տարեկան հասակին մէջ. երբ կը կրթէի զայն իմ ժառանգորդս ու յաջորդս կարգելու յոյսերով: Մենք շատ սերտ գործովանօք կապուած էինք իրարու: Ոչ ոք պիտի կրնար իմ թանկագին հանգուցելոյս նամակները կեղծելով, զիսխաբեկ մեռնելէն ի վեր տարի մ'է բայց չարաթ չ'անցնիր որ խռատական ու հանգստացուցիչ գրութիւններ չ'ստանամ իրմէ: Կարծես այժմ նա ինծի աւելի մօտ ըլլար քան առաջները:


Վերջին ամիսներու մէջ ես շատ կը ճամբորդէի արտասահման և իրմէ անընդհատ տեղեկութիւններ կըստանայի. ինչպէս կըլլար իւր կենդանութեանը: Այդ ծանօթութիւնները ես ինքս չ'էի գրեր: Ես

հանգուցեալը, շատ լաւ ճանչնալուս, իմ ձեռքովս գրուած արձանագրութիւնը գուցէ անգիտակից արձագանքը ըլլար մեր կանխադասման Այժմ նա ինծի հետ կը հաղորդակցէր երկու վստահելի անձնաւորութիւններու միջոցաւ: Բոլոր այդ գրութիւններու մէջ թափանցուած կը տեսնուէին անոր բնաւորութեան, նկարագրի նշանները և խորհելու եղանակը: Անոր անձնաւորութիւնը այժմ կը ցոլանայ իւր գրութիւններուն մէջ այնպէս, ինչպէս որ կըլլար երկրի վրայ իւր գոյութեանը ատեն գրած նամակներուն մէջ:

Այս բոլորէն վերջ ինծի համար կասկածելի բան չ'կայ:

Ինծի համար հարցը որոշուած և ճշմարտութիւնը հաստատուած է: Ուստի ուրախ եմ այս առթիւ հրապարակաւ ամենուն առաջ յայտարարելու թէ՛ ասկէ վերջ այդ մասին ունէ առարկութեան և ունէ հերքումի հետ չ'եմ կրնար համաձայնիլ:

Թարգմանութիւն՝ Պուլկարեհեհե



Հ Ա Վ Ա Տ Ի Ս Ա Թ

ԹԻԻՐԻՔԻԱ

Արդարև ասում են, որ Երևանի քաղաքը մեծ աճ է ապրում, և շատ քիչ ժամանակ է, որ քաղաքի սահմանները չեն արդեն զբաղեցրել իրենց սահմանը:

— Երևանի քաղաքը մեծ աճ է ապրում, և շատ քիչ ժամանակ է, որ քաղաքի սահմանները չեն արդեն զբաղեցրել իրենց սահմանը:

— Երևանի քաղաքը մեծ աճ է ապրում, և շատ քիչ ժամանակ է, որ քաղաքի սահմանները չեն արդեն զբաղեցրել իրենց սահմանը:

— Երևանի քաղաքը մեծ աճ է ապրում, և շատ քիչ ժամանակ է, որ քաղաքի սահմանները չեն արդեն զբաղեցրել իրենց սահմանը:

— Երևանի քաղաքը մեծ աճ է ապրում, և շատ քիչ ժամանակ է, որ քաղաքի սահմանները չեն արդեն զբաղեցրել իրենց սահմանը:

— Երևանի քաղաքը մեծ աճ է ապրում, և շատ քիչ ժամանակ է, որ քաղաքի սահմանները չեն արդեն զբաղեցրել իրենց սահմանը:

— Երևանի քաղաքը մեծ աճ է ապրում, և շատ քիչ ժամանակ է, որ քաղաքի սահմանները չեն արդեն զբաղեցրել իրենց սահմանը:

— Երևանի քաղաքը մեծ աճ է ապրում, և շատ քիչ ժամանակ է, որ քաղաքի սահմանները չեն արդեն զբաղեցրել իրենց սահմանը:

— Երևանի քաղաքը մեծ աճ է ապրում, և շատ քիչ ժամանակ է, որ քաղաքի սահմանները չեն արդեն զբաղեցրել իրենց սահմանը:

— Երևանի քաղաքը մեծ աճ է ապրում, և շատ քիչ ժամանակ է, որ քաղաքի սահմանները չեն արդեն զբաղեցրել իրենց սահմանը:

— Երևանի քաղաքը մեծ աճ է ապրում, և շատ քիչ ժամանակ է, որ քաղաքի սահմանները չեն արդեն զբաղեցրել իրենց սահմանը:

— Երևանի քաղաքը մեծ աճ է ապրում, և շատ քիչ ժամանակ է, որ քաղաքի սահմանները չեն արդեն զբաղեցրել իրենց սահմանը:

Երևանի քաղաքը մեծ աճ է ապրում, և շատ քիչ ժամանակ է, որ քաղաքի սահմանները չեն արդեն զբաղեցրել իրենց սահմանը:

Տ Ա Ի Ի Լ Ի Յ Է

Ձեռք բերված և վաճառվող գրքերի ցուցակ:

Ձեռք բերված և վաճառվող գրքերի ցուցակ:

Ձեռք բերված և վաճառվող գրքերի ցուցակ:

Ձեռք բերված և վաճառվող գրքերի ցուցակ:

Ձեռք բերված և վաճառվող գրքերի ցուցակ:

Ձեռք բերված և վաճառվող գրքերի ցուցակ:

Ձեռք բերված և վաճառվող գրքերի ցուցակ:

Ձեռք բերված և վաճառվող գրքերի ցուցակ:

Ձեռք բերված և վաճառվող գրքերի ցուցակ:

Ձեռք բերված և վաճառվող գրքերի ցուցակ:

Ձեռք բերված և վաճառվող գրքերի ցուցակ:

Ձեռք բերված և վաճառվող գրքերի ցուցակ:

Ս Ա Թ Ը Լ Ի Յ Օ Ր

ՏՕՊԻՉ ԲԱՆԱԽԻ ՄԱՀԵԼԻՆՏԷ ՔԵԱՅԻՆ

ԶԻՐՏԵՔԻ ԶԵՐԿԵԼԵՐ

ՏԻԻԲԵԱՆ

1. ՈՒԼԻՑԱ - Գարույս գարշը սողտա	№ 1-14
1. » Մաղ սողադառ	» 15-18
2. » Թուֆաթի վե Պագալիյե չարսըսը	» 19-27
2. » Գարշը թարափտա	» 28-34
1. » Սաղ թարափտա (Գահվե)	» 35-38
1. » » (Մանիֆաթուրա)	» 38-40
1. » Սոլ թարափտա (Թարափտա)	» 41-46
4. » Սաղ քեօշեթե (Գահափվե սանտրգը)	» 47-52
1. » Սոլ թարափտա (Մանիֆաթուրա)	» 53-66

Ետագրադի 66 կեօղ ախլա սանտրա խարսը քեօշեթե վե քերե-միտի վե տիկեթ խարսը քերեթիտիկ տիր:

ԶԵՐԿԵ ԻԶԻՆ ՊՕՇ ԵՆԸԼԵՐ

4. ՈՒԼԻՑԱ - ԷՅրաֆը աղան չաթըլը եթըլը	№ 67-68
4. » Սաֆի պոշ եթը	» 69-74
1. » Սաղ թարափտա ի գեթի աղան չաթըլը	
վե իթը թարափը քեօշե պիտանե վե	
թեթթի իթըլը	» 72-83
3. » Ձերըլը վե մեյանեթըլը սողադըստա	
իւթթիւ աղան չաթըլը եթըլը	» 84-102
3. » Ձեօրեթե վե քերեթեթ չարսըսըստա	
պոշ եթըլը	» 103-115

Մեզ քերե եթըլը բանալի իթթիթեթե մալի պոշանըլ տըրար. էօլ. լեթի կեօրեթի իթթեթե Տօպրիլեթ Պ. Յուլանեթա Սարգիսեան իլե կիւ տուպ կեօրե պիլը:

Սաթըլը ալմաթ իթթեթեթըլը Վառնտա Պ. Միքայել Գալստյանեան միւրաճաթ իթթեթի տիրըլը:

ԹԻԻՃՃԼԻՐԻ Է

ՁԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ	
Վալոն 100 քիւ. 15.10/16.25	
Արապա 5 չիթիկ	11.07
ԱՐԱՍ	
Վալոն 100 քիւ. 12.	
Արապա 5 չիթիկ	7.16
ԵՈՒԼԱՅ Վալոն	10.25
» արապա	5.06
ՁԱՎՏԱՐ 100	11.50
» Արապա	7.
ՅԱՍՈՒԼԻԱ 100 քիւ. 24.1/25.	
ՏԱՐԸ 5 չիթիկ	9.80
ՄԻՍԻՐ 100 քիւ. 11.55	
» արապա	8.19
ՖԻՅ 5 չիթիկ	10.60

ՊԱԳԱԼԻԷ

Վառնա բիւցալըստա պագալիյե մալ	
լեթի պոլ կիւնթի ֆիյաթը, ալթըն ֆը-	
րանթ իլե:	
ԳԱՀՎԷ 2.65.2.75	
ՇԵԲԵՐ ԶԵՄԵ քեթըլե 88.	
ՇԵԲԵՐ քեթըլե սանտրգը 45.	
ԲԻՐԻՆՇ ԶԵՄԵ չուվալը 45.	
» Իսկիլիզ » 32.33	
» Բիզոն » 53.	
» Ֆիլիպե » 44.	
ԿԱՀ Պաթուլ Սանըլը 9.70	
» Թարապ. 1 թեթեթ 4.	
ՁԵԹԻՆ ԵԱՂԸ քիւ. 1.80.2.10	
ԳՈՒՐՈՒ Իւլիւմ 85/95	
ԽՈՒՐՄԱ 40.50	
ԹՈՒՀ Թուրուզ չուվալ 12.20	
ԹՈՒՀ Ֆոզա » 13.50	
ԵՆԱՄԱԼԹԱ 5.	

Հ Ա Յ Փ Ա Ս Տ Ա Ր Ա Ն Մ Ը

Ի Վ Ա Ռ Ն Ա

Երևանի քաղաքի Սարգիս Գրիգորեան եւրոպական համալսարանի իւր մէջ իւրապաւորութեան հետեւած և չորսնաւարտի վկայականը ստանալէ յետոյ եւ կած է իր փաստաթան հաստատութիւնը քաղաքի մէջ, Շումեյսթա փողոց, քաղաքապետութեան շէնքին ետեւ կողմը:

Դատական գործոց մէջ ազգային մը պաշտպանութեան առաւելութիւնները ճանչցող ազգային թող դիմեն իրեն աւ քո: պիտի միանա:

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

«Իրաւունք» իւրաքրաւ տունէն կարելի է ստանալ Հետեւեալ գիրքերը:
ՂԱՐԻՊ ԱԽՊԼԻՐ՝ գիրք 1 ֆր
ԱԶԱՏ ԵՐԳԱՐԱՆ՝ » 1 »
ԽԻՐԱՊԱՆ Լ. հատոր » 1 20 »
ԽԻՐԱՊԱՆ Տ. » » 2.80 »
ԿԱՐԱՐԻ ԴԱՐԱՆ » 1 »
ՊՈԼԿԱՐԱՆ ՊԱՏԱՐ » 50 ան.
ԻՐԱՆԻՆԻՔԻ հաւաքածոյ մէկ տարուան 12 ֆր.
Սօյն գիրքի և ստանալու հաւաքածոյ պէտքէ ալմաթ կանխիկ զրկել
Առաւել տար օրինակ գնողին 20 առ 100 զեղձ կ'ըլլայ:

Издатель: X. Кургенян

Տպարան «Իրաւունք» Վառնա